ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՏԱԾԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N-ԱՀ-03/45/25
«29» հունվար 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարի
տեղակալ՝ Ավագ Ավանեսյանին

Հարգելի պարոն Ավանեսյան,

Կից Ձեզ է ուղարկվում **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գարանտ 24» ՍՊ ընկերությանը ներառելու որոշումը:

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ ceooffice@1tv.am

www.1tv.am

Ո Ր Ո Շ Ու Մ

ք. Երևան **«23» հունվարի 2025թ.**

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության (Այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2024 թվականի օգոստոսի 28-ին հայտարարված՝ **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23** ծածկագրով ***Համակարգչային պարագաների և տեսահսկման համակարգի նյութերի ձեռքբերման*** ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ ներկայացրած «Գարանտ 24» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող. 25/14շ., 76բն., հեռ. +374 41 072 007, էլ. հասցե՝ creative.business1920@gmail.com) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, մասնավորապես.

Ընթացակարգի շրջանակներում «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության հետ կնքված թիվ **«ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23-2»** պայմանագրի (Այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.1 կետը, որի համաձայն Վաճառողը պարտավորվում է Գնորդին հանձնել ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է այն:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Տվյալ դեպքում Պայմանագրով մատակարարվող ապրանքի ժամկետն ավարտվել է 06.12.2024 թվականին, սակայն մինչ օրս ապրանքը չի մատակարարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ ժամանակին չի մատակարարել ապրանքը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը, ղեկավարվելով վերը նշված փաստական և իրավական հիմքերով, հրաժարվել է կնքված Պայմանագրից՝ այդ մասին ծանուցելով «Գարանտ 24» ՍՊ ընկերությանը՝ սահմանված կարգով և ժամկետում:

Տեղեկացնում ենք նաև, որ «Գարանտ 24» ՍՊ ընկերությունը հնարավորություն է ունեցել պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման համար ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը սպասարկող բանկի անունով բացված հաշվեհամարին, դրանով իսկ

խուսափելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելուց:

Սակայն, ելնելով այն հանգամանքից, որ «Գարանտ 24» ՍՊ ընկերությունը չի ներկայացրել տուժանքի մասին համաձայնագրերը և հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի Ա ենթակետը ***(խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը).***

ՈՐՈՇԵՑԻ

«Գարանտ 24» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Առդիր՝ 126 (հարյուր քսանվեց) էջ:

Հարգանքով՝

Գործադիր տնօրենի տեղակալ-
Ֆինանսական տնօրեն **Արարատ Հակոբյան**

Կատարող՝
Գնումների կազմակերպման բաժնի
առաջատար մասնագետ
Լիլիթ Ղազարյան
Հեռ: 010 65 00 15 (1-57)